պատուէին զառաքեալն և զքվարդապետն և զերկրորդ լուսաւորիչն։

Եւ Ահարոն տարածեալ զձեռս և հայեցեալ յերկինս, աւրհնէր զառաքողն և զառաքեալն՝ զարարողն և զընդունողն, և ընդ նմա համաձայնեալ հաւատք և հովիւք՝ ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք՝ տային աւրհնութիւն լուսոյն աշխարհի որ լուսաւորեաց զմեզ ի ձեռն մեծին Մեսրովբայ [թղ. 15 ա]։ Եւ ինքն Ահարոն բարձր ձայնիւ՝ շնորհակալութիւն վերառաքէր ասելով։

Աւրհնեալ ես Հայրդ բնութեամբ և շնորհաւք, գովեալ Որդիդ բնութեամբ, և պարգևաւք բարեբանեալ ես Հոգիդ Սուրբ էութեամբ և ողորմութեամբ. եռակի գոյութիւն և եզակի բնութիւն. ինքնավառ ճառագայթ. եռ և մու, և մու և եռ, երեք սուրբ և մի Ծէր, երեք լոյս և մի լոյս, երեք Աստուած և մի Աստուած, ոչ ներհակք և ոչ նախ և զկնի. և ոչ առաւել և նուազ, և ոչ իշխան և իշխեցեալ, այլ հաւասար ամենայնիւ, բարի և բարէբար, մեծ և հզաւր, իշխան և թագաւոր, Ծէր, և Արարիչ, Աստուած ամենայն յամենայնի. ծանաւղ և անծին, ծնեալ [և ծնեալ] և ծնող, բխեալ և բղխումն և բղխող։ Գոհանամք զքէն, որ էնդ և եսդ և էդ. որ ոչ միայն կառուցեր զմեզ՝ այլ և կառավարես,